# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 197

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 48 կետի՝ որոշում եմ.

1.Ակունք համայնքի Զառ բնակավայրի վարչական տարածքի (ծածկագիր 07-027-0018) 0.1 հա հողամասին տրամադրել հասցե Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք գ.Զառ Կենտրոնական փողոց 6/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18 թ. սեպտեմբերի 07
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 198

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Սաաբերդ գյուղի բնակիչ Աշոտ Տոնոյի Գրիգորյանի դիմումը, որոշում եմ.

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակչին տրամադրել ֆինանսական աջակցություն՝ Աշոտ Տոնոյի Գրիգորյան ՝ 30 000 դրամ: 2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20__թ. ______________
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 199

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Ակունք բնակավարի բնակիչ Սարգիս Արտուշի Սարգսյանի դիմումը որոշում եմ՝

1. Ակունքի համայնքի վերը նշված բնակչին ֆինանսապես աջակցելու նպատակով մասնակիորեն վճարել նրա ուսման վարձից՝

Սարգիս Արտուշի Սարգսյան 70 000 դրամ

2.Գումարը փոխանցել նրա ներկայացրած հաշվեհամարով :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20__թ.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 200

## ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 05 բաժնի 01 խմբի 1 դասի <<Աղբահանություն> ծրագրի 5122 հոդվածից 1300 000 դրամ տեղափոխել

ա)850 000 դրամ ՝01 բաժնի 01 խմբի 1 դասի << Օրենսդիր մարմիններ,պետական կառավարում >> ծրագրի 5122 հաշիվին

բ) 450 000 դրամ՝ 09 բաժնի 01 խմբի 1 դասի <<Մանկապարտեզի կապիտալ վերանորոգում>> ծրագրի 5113 հաշիվ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18 թ.
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 201

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Խաչատուր Վրեժի Արզումանյանի դիմումը՝ Ակունք համայնքի գ.Ակունք 13-րդ փողոց թիվ 16/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 92.5 քառ. մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 82.58 քառ.մետր մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝92.5քառ.մետր) իրեն օտարելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականիմայիսի 18-ի N 912-Նոր որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Ակունք համայնքի գ.Ակունք 13-րդ փողոց թիվ 16/2 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 92.5քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 82.58քառ.մետր մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝92.5քառ.մետր) օտարել կառույցն իրականացրած Խաչատուր Վրեժի Արզումանյանին:

2.Պարտավորեցնել Խաչատուր Վրեժի Արզումանյանին՝համայնքի բյուջեի 900105203179 հաշվեհամարին վճարելու հողամասի կադաստրային արժեքը՝ 114 885 (հարյուր տասնչորս հազար ութ հարյուր ութսունհինգ) և 900105203211 հաշվեհամարին շինությունների վաճառքի արժեքը՝ 120 250 (մեկ հարյուր քսան հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3.Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղարի Մարոզ Սարիբեկյանը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/18 թ. ____________
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 202

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ակունք համայնքի Հատիս գյուղի բնակիչ Մարգարիտ Սամվելի Մարտիրոսյանի դիմումը, որոշում եմ.

1.Ակունքի համայնքի ներքոնշյալ բնակչին տրամադրել ֆինանսական աջակցություն.

Մարգարիտ Սամվելի Մարտիրոսյան ՝ 40 000 դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18թ. սեպտեմբերի 14
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 203

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով կառուցապատող Արտյոմ Կարենի Խոջայանի դիմումը որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ Արտյոմ Կարենի Խոջայանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի գյուղ Նոր գյուղ 6-րդ փողոց թիվ 18, ծածկագիր՝ 07-049-0048-0003 բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,1 հա հողամասի վրա բնակելի տան կառուցման համար:
2. Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 18
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 204

### ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 06 բաժնի 04 խմբի 1 դասի <<Փողոցային լուսավորություն>> ծրագրի 4212 հոդվածի 3-րդ եռամսյակից 800 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի <<Օրենսդիր մարմինների պետական կառավարում>> ծրագրի 4212 հոդվածի 3-րդ եռամսյակ:

2. 06 բաժնի 04 խմբի 1 դասի <<Փողոցային լուսավորություն> ծրագրի 5122 հոդվածից 300 000 դրամ տեղափոխել 01 բաժնի 01 խմբի 1 դասի 5112 հոդված:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 18
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 205

### ԼԵՎՈՒՇ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման 29 դեկտեմբերի 2005թ. Թիվ 2387 որոշման կարգի 29-րդ կետի.որոշում եմ

1. Լևուշ Պատվականի Հովհաննիսյանին պատկանող /ծածկագիր 07-027-0018-0003/ անշարժ գույքի բաժանման արդյունքում առաջացած.

- 0.40940հա հողամասին տրամադրել՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք գ. Ջառ Կենտրոնական փողոց թիվ 14/1 հասցե.
- 0.26120հա հողամասին տրամադրել՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք գ. Ջառ Կենտրոնական փողոց թիվ 14/2 հասցե.
- 0.10790հա հողամասին տրամադրել՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք գ. Ջառ Կենտրոնական փողոց թիվ 14/3 հասցե.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. __________ 18
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 206

## ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի, որոշում եմ `

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 23-ի «Ակունքի համայնքապետարանի 2018 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 18 թ. սեպտեմբերի 19
գ. Ակունք